Հարգելի բուժառու,

Ձեզ վերջերս իմպլանտացվել է HumanOptics-ի արտադրության **ARTIFICIAL*IRIS*** իմպլանտ (կոչվում է նաև ծիածանաթաղանթի իմպլանտ): Բուժառուների այս տեղեկատվական թերթիկը նախատեսված է տրամադրելու ամենահաճախ տրվող հարցերի պատասխանները **ARTIFICIAL*IRIS***-ի վերաբերյալ: Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք խորհրդակցել Ձեր ակնաբույժի հետ:

ԻՆՉԻ՞ ՀԱՄԱՐ Է ՕԳՏԱԳՈՐԾՎՈՒՄ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԾԻԱԾԱՆԱԹԱՂԱՆԹԸ:

ARTIFICIAL*IRIS*-ը բժշկական իմպլանտ է, որն օգտագործվում է անիրիդիայի բուժման համար: Անիրիդիան բնութագրվում է որպես աչքի բնական ծիածանաթաղանթի մասնակի կամ լրիվ բացակայություն:
Արհեստական ծիածանաթաղանթը վերականգնում է աչքի բնական բացվածքի ֆունկցիան, սակայն բբի չափը միշտ մնում է նույնը՝ զգալիորեն բարելավելով ինչպես տեսողության որակը, այնպես էլ ծիածանաթաղանթի էսթետիկ տեսքը:

Ո՞Ր ԲՈՒԺԱՌՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ Է ՀԱՐՄԱՐ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԾԻԱԾԱՆԱԹԱՂԱՆԹԸ:

Արհեստական ծիածանաթաղանթը կարող է օգտագործվել մեծահասակների և 6 տարեկանից մեծ երեխաների համար, ում բնական ծիածանաթաղանթը ամբողջովին կամ մասնակիորեն բացակայում է: Անիրիդիան կարող է լինել բնածին կամ առաջանալ դժբախտ պատահարի կամ հիվանդության պատճառով: Սարքի տեղադրման հետ կապված կլինիկական տվյալներ չկան կրծքով կերակրող մայրերի և թուլացած իմունիտետով անձանց համար:

ԿԱ՞Ն ԱՐԴՅՈՔ ԻՄՊԼԱՆՏՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ:

Ոչ մի բժշկական միջամտություն ամբողջովին ռիսկերից զուրկ չէ, այդ թվում նաև՝ անիրիդիայի բուժման և **ARTIFICIAL*IRIS*-**ի իմպլանտացման հետ կապված: Այնուամենայնիվ, հենց իմպլանտի պատճառած որևէ անբարենպաստ երևույթ հայտնի չէ:

ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՔ ԻՄԱՆԱԼ, ԹԵ ՈՐ ԱՐՏԱԴՐԱՆՔՆ Է ՁԵԶ ԻՄՊԼԱՆՏԱՑՎԵԼ:

Վիրահատությունից հետո Ձեզ տրամադրվել է բուժառուի քարտ, որտեղ նշված են արտադրողի կոնտակտային տվյալները: Բացի օգտագործված իմպլանտի մասին տեղեկություններից՝ բուժառուի քարտում նշված են նաև Ձեր անունը, վիրահատության օրը, վիրահատությունն իրականացնող ակնաբույժի և ակնաբուժական կենտրոնի կոնտակտային տվյալները: Ձեր իմպլանտը նույնականացվում է իր եզակի սերիական համարով (SN):

Ի՞ՆՉ ՆՅՈՒԹԻՑ Է ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԾԻԱԾԱՆԱԹԱՂԱՆԹԸ:

HumanOptics-ի արհեստական ծիածանաթաղանթը պատրաստված է կենսահամատեղելի սիլիկոնից (դիֆենիլ կո-դիմեթիլ պոլիսիլոքսանից և սիլիկոնային ամրացնող խեժից)՝ սիլիկոնի մեջ ներկառուցված գունային պիգմենտով: Արհեստական ծիածանաթաղանթի երկու մոդել կա (մանրաթելով/առանց մանրաթելի): «with Fiber» մոդելն ունի ներկառուցված պոլիմերային մանրաթելային ցանց, որը պատրաստված է պոլիէթիլենտերեֆտալատից (PET), ինչը մեծացնում է ամրությունը: «with Fiber» մոդելը օգտագործվում է հատուկ դեպքերում, երբ կարերով ֆիքսացիա է ցուցված:

ԻՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԵՄ ՎԻՐԱՀԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ:

Բուժման լավագույն արդյունք ստանալու համար կարևոր է հետևել Ձեր ակնաբույժի ցուցումներին և հաճախել հետզննման այցելություններին, ինչպես որ համաձայնեցրել եք Ձեր ակնաբույժի հետ:
Եթե այլ կերպ ցուցված չէ Ձեր ակնաբույժի կողմից, վիրահատությունից հետո առաջին երկու շաբաթվա ընթացքում պետք է խուսափեք վիրահատված աչքի հետ որևէ մանիպուլյացիա կատարելուց, օրինակ՝ սեղմելուց կամ տրորելուց: Ձեր աչքը չպետք է շփվի ջրի կամ օճառի հետ ցնցուղ ընդունելիս կամ լվացվելիս: Սկզբնական շրջանում պետք է նաև զերծ մնաք ֆիզիկական ծանրաբեռնվածությունից, լողալուց, սուզվելուց, հեծանվավազքից կամ սաունա այցելելուց: Հարկավոր է նաև խուսափել այնպիսի գործողություններից, երբ մեծ քանակությամբ փոշի և կեղտ կա:

ՈՐՔԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԿԱՐՈՂ Է ԻՄՊԼԱՆՏԸ ՄՆԱԼ ԻՄ ՄԱՐՄՆՈՒՄ:

Եթե բժշկական հակացուցումներ չլինեն, արհեստական ծիածանաթաղանթը սովորաբար մնում է Ձեր աչքի մեջ Ձեր կյանքի մնացած ողջ ընթացքում: HumanOptics-ի արհեստական ծիածանաթաղանթի ծառայության հաստատված ժամկետը քսան տարի է: Խորհուրդ ենք տալիս անցնել պարբերական ակնաբուժական զննումներ՝ խորհրդակցելով բուժող բժշկի հետ:

ԱՐԴՅՈ՞Ք ԻՄ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԾԻԱԾԱՆԱԹԱՂԱՆԹՈՎ ՄՌՏ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼԸ ԱՆՎՏԱՆԳ Է (ՀԱՄԱՏԵՂԵԼԻ Է):

Ձեր իմպլանտի հետ կապված Մագնիսական ռեզոնանսային տոմոգրաֆիայի (ՄՌՏ) անվտանգության (համատեղելիության) մասին տեղեկությունները կարող եք գտնել Ձեր բուժառուի քարտի վրա: Այնտեղ տրամադրված են կարևոր տեղեկություններ իմպլանտի մասին՝ ՄՌՏ հետազոտության ժամանակ մագնիսական ճառագայթման վերաբերյալ, քանի որ արհեստական ծիածանաթաղանթը իմպլանտացնելուց հետո այն մշտապես մնում է Ձեր մարմնի մեջ:
HumanOptics-ի կողմից արտադրված արհեստական ծիածանաթաղանթի բոլոր իմպլանտները հավաստագրված են որպես ՄՌՏ հետազոտությունների հետ պայմանականորեն համատեղելի: Իմպլանտը ՄՌՏ հետազոտությունների համար հավաստագրված է որպես անվտանգ՝ որոշակի պայմաններում: Սա նշանակում է, որ արհեստական ծիածանաթաղանթի իմպլանտով բուժառուն միայն որոշակի պայմաններում պետք է մտնի ՄՌՏ սկաների մագնիսական դաշտ: Խնդրում ենք ՄՌՏ հետազոտությունից առաջ ցույց տալ Ձեր բուժառուի քարտը Ձեր բժշկին:
Լրացուցիչ մանրամասների համար խնդրում ենք այցելել www.humanoptics.com/mri:

ԻՆՉ ԿՈՂՄՆԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ/ԱԽՏԱՆԻՇՆԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ԱՌԱՋԱՆԱԼ, ՈՐՈՆՔ ԿԱՊՎԱԾ ԵՆ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԾԻԱԾԱՆԱԹԱՂԱՆԹԻ ԻՄՊԼԱՆՏԱՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՄ ԻՆՉԸ ԿԱՐՈՂ Է ՎԿԱՅԵԼ ԻՄՊԼԱՆՏԻ ԹԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ:

Ծիածանաթաղանթի վիրահատությունից հետո կարող են առաջանալ հետևյալ կողմնակի ազդեցությունները, որոնք սովորաբար անցնում են կարճ ժամանակից.

- Օտար մարմնի զգացողություն, որն առաջացել է **ARTIFICIAL*IRIS***-ի տեղադրման համար արված կտրվածքից
- Աչքերի թեթևակի կարմրություն

HumanOptics Holding AG, Spardorfer Str. 150, 91054 Erlangen, Germany www.humanoptics.com

Արհեստական ծիածանաթաղանթի իմպլանտացման հետ կապված բարդությունների մասին կարող են հուշել հետևյալ ախտանիշները: Այս ախտանիշներն ունենալու դեպքում խորհրդակցեք բժշկի հետ.

- Տեսողության հանկարծակի կամ աստիճանաբար վատթարացում/մշուշոտ տեսողություն, լույսի բռնկումներ կամ մուգ վազող կետեր (լողացող մթագնումներ)
- Լույսի հանդեպ ավելացած զգայունություն
- Աչքի չափազանց արցունքահոսություն
- Աչքի ուժեղ կարմրություն և/կամ քոր
- Ցավ աչքում
- Սրտխառնոց, փսխում, ուժեղ գլխացավ

Այս ախտանիշները կարող են շատ հազվադեպ լինել՝ նույնիսկ բոլոր նախազգուշական միջոցները ձեռնարկելուց հետո: Եթե Ձեզ մոտ նկատվում է վերը նշված ախտանիշներից որևէ մեկը կամ ունենում եք անսպասելի խնդիր՝ ապաքինման գործընթացի հետ կապված, խնդրում ենք դիմել ձեր ակնաբույժին: Եթե լուրջ անբարենպաստ երևույթներ են առաջանում, բժիշկը պետք է դրա մասին տեղեկացնի արտադրողին և համապատասխան առողջապահության մարմնին: Ձեր երկրի համապատասխան առողջապահական մարմինը կարող եք գտնել www.humanoptics.com/patient-information կայքի «Առողջապահական մարմիններ» բաժնում:

CE
0044

V2.0/2025-07_Բուժառուի_տեղեկություններ_AI